

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկիսի	7 "
վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկիսի	8 "
վեցամսեայ	8 "
Աւերիկայի համար	3 ֆր.
սարեկիսի	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Իրանուցի սոյոյն ու սարեկիսի համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Իրեկիսի ու ելի սանթիմերու համար 20 0/0 գնդը կըլլայ:

Վառեցայի համար ձեռ. ֆ 40 սանթիմ է

ՇԱԲԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԿ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИАНЪ

Խաղակի և զրամ դրոշմի խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռ. ֆ 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռ. ֆ 20 ՍԱՆԹԻՄ

Իրեկիսի և ելի սանթիմ

ՇԱԲԱԿԻ ՄԱՍԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԵՆԻ ԿԱԶՄԵՆ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՑ. ԽՈՒՆՈՐԵԱՆ ԱՕՅԻՄ ԲՈՂԱԿԻ ՎԻՃԱՆ. ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոնակ գնել փափաքողները կրնան իրեն դիմել Չար-Պօրիս փողոց Վառնա

Café Promenade Vienne

Սյու չքեղ սլ ճարանը կը գրտնուի Վիեննայի Ծոսեֆ քարափին վրայ: Կըստանայ զանազան հայերէն թերթեր: Առ հասարակ բոլոր հայ կամ արեւելիքի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրու թիւնները և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՆԱՍԱԿԱՏՈՒՓ

Չը վճարող բաժանորդներուն. կը ինդրենք որ մինչեւ փետրվար շտապեն իրենց պարտքերը վճարել:

ԱԶՍԱԿԱՆ ԴԱՂԻՃԸ ԵՒ Հ Ա Յ Ե Ղ

Պալթուրի անկումէն յետոյ, երբ ազատականները կառավարութեան ղեկը ձեռք առին, շատ հայեր սկսան դարձեալ գունդ գիղջայտներ հիւսել իրենց երեւակայութեան մէջ: Հիմա հայերու գործը աղէկը է ազատականները կառավարութեան գրուելը անցան:

Ամէն հայ սկսաւ այսպէս տրամաբանել: Հայկական գիւրաբորբօք խանդավառութիւնը արժարձելու առիթ գտած էր. ու կը հրահրէր, կը բռնկէր, կ'ո

գեւորուէր, լայն լայն թորչքներ կ'առնէր:

Ի՞նչ կար սակայն դրական, շօշափելի, այս լայն խանդավառութիւնը առաջ սցելու համար: Իրապէս ոչինչ: Բայց միայն քանի մը լայն խարարներու անուններ, որոնք հայկական դատին առիթ մերթ ընդ մերթ առեւնախօսութիւնները բաժնէին և համակրութեան նշաններ ցոյց տուած: Հ. Կլաւտար, էտուար Կրէյ, ձէյմա Պրայս եւն. ամէնքն ալ հայասէրներ, իրաւ, բայց որոնք գործնականապէս չի պիտի կրնան. ապահովաբար, աւելի կարեւոր աշակցութիւն մը ընել հայոց համար քան Պալթուրի դահլիճը:

Մենք դառն անցեալ մը ունինք այս մասին խորապէս համոզուելու և ունայն խանդավառութեամբ շտապելու համար: Ստուգիւ, 94—95 թ. դէպքերուն ատեն, երբ ամբողջ Անգլիան հայկական դատով կողմնորոշէր, հայէն աւելի հայոց դատարարապետը կը ձեռնարկէր, այդ ազատական դահլիճն էր որ Ռոզպէրի բերնով յայտարարեց անամթաբար թէ «անգլիական մարտնաւերը մինչեւ Արարատ չէին կրնար բարձրանալ», ու այսպէս ամբողջ հայ ազգը արիւնարբու գազանին դէմ ձգեց միս մինակ, առանց ամչնալու, առանց խղճի խաթ ունենալու թափուող անմեղ արիւնին համար, որուն պատասխանատուութեան մէկ մեծ բաժինն ալ իր վրայ կը ծանրանար: Անգլիոյ ազատական կառավարութիւնը լքեց իր ստեղծած, իր յուզած, իր յառաջացուցած այս դատը, և թողուց որ ամբողջ անպաշտպան ազգ մը իր դատարարութեան զօնն ըլլայ:

Այսօր կրկին իշխանութեան գլուխ անցած է ազատական կուսակցութիւնը. եթէ կը կարծենք որ այդ կուսակցութիւնը հայոց բարեկամ կուսակցութիւն մըն է, ու այդ մտածումով ճամբայ ելլել կըսկսինք, դարձեալ մեծ սխալ մըն է որ գործելու վրայ պիտի

ըլլանք: Երբ նեղ օրերը գան, երբ գոյութեան ճգնաժամին առջեւ աչքերն իս մեր շուրջը բոլորենք շօշուփելն հայցելու համար, պիտի խոսենք որ, «անգլիական խմբագրութեան Արարատ չեն կրնար բարձրանալ» բանաձեւը որ է պիտի ցցուի մեր տուղեւ:

Ազատական դահլիճին մէջ իրաւ է որ մաս մը կայ որ կուզէ վերջնապէս ազատիլ հայկական խնդրէն: Բայց ոչ թէ հայերու նպատակարարութեամբ մը անպատճառ, Ինչ մէկ երկու տարի առաջ, ձէյմա Պրայս, այժմ նախարար, Լօնտօնի մէջ մասնաւոր տեսակցութեան մը ատեն յայտարարած է թէ, Հայկական խնդրին միակ կարելի լուծումը՝ թրքական հալածանքէն տառապող հայաբնակ դաւանները Ռուսիոյ յանձնելն է: «Իրաւ է թէ, ըսած է ձէյմա Պրայս, Ռուսիան բարոյապէս շատ կը ճնշէ հայերը, բայց սա բանը գոնէ ստուգապէս կըրնանք ըսել թէ՛ Ռուսիոյ ձեռքին տակ՝ երբէք հայկական կոտորած կամ զանգուածային ջարդատեղի չի կրնար ունենալ»:

Ուստի հաւանական է որ օր մը Անգլիան համաձայնութեան գայ Ռուսիոյ հետ Հայաստանը անոր յանձնելու համար, որպէսզի հայկական խնդրէն ազատի և իր ճակտին քուսած մուրը սրբէ: Բայց ասկէ մենք ուր է անմիջական օգուտ մը չի պիտի կրնանք ունենալ, քանի որ, ինչպէս կը տեսնենք, Ռուսիան ալ, իր գազանութեան մէջ, ոչ միայն թուրքէն վար չի մնար, այլ նոյն իսկ կը գերազանցէ զայն: Այսօրուան ճուշի հեռագիրը զոր «Արշալոյսէն» արտատպած ենք, կուզայ պաշտօնապէս հաստատել ուս կառավարութեան անարգ դերը հայ թաթարական ընդհարումներուն մէջ: Ինչ որ կընէր սուլթանին կառավարութիւնը քիւրտերու ձեռքով, նոյնը կընէ այսօր Ռուսիան՝ թաթարներու ձեռքով:

Ու այս իրողութիւնները կապացուանեն թէ ո՞ր աստիճան սխալած է ձէյմա Պրայսի պէս, ժարդ մը որ հսկայ Անգլիոյ նախարարներէն մէկն ըլլալով՝ քաղաքական խնդիրներու այնքան տեղեկան ձէյմա:

Հետաքրքիր էր գիտնալ թէ ի՞նչ կը խորհի հիմա ձէյմա Պրայս հայկական դատի մասին: Արդեօք կրկին իր այս յայտնած կարծիքը կը պաշտպանէ:

Ինչ որ ալ ըլլայ, սա ստոյգ է որ, ազատական դահլիճը, ինչպէս պահպանողականը, մեր դատին համար բնաւ դրական օգուտ մը մատուցանելիք չունի, որքան ատեն որ մենք, մեր ուժով, հրապարակ չի գանք ու մեր կամքը շարտադիր չի դարձնենք:

Մեր բոլոր ակնկալութիւնները միայն մեր բազուկներուն մէջ փնտռենք, ու երբէք օտար դահլիճներու փոփոխութեանց մէջ, որքան ալ մեզի համակիրներ ըլլան նորեկները, Ամէն կառավարութիւն իր երկրին մէջ յուզուող հարգաւոր խնդիրներ ունի, որոնք իր զբաղմանց կարեւորագոյն մասը կը կազմեն, և հայկական խնդիրը անոնց քով հիւլէի մը նշանակութիւն ունի, որով կըզբաղի միայն այն ատեն, երբ մենք կարողանանք ստիպել զիրենք մեր գործունէութեամբ: Գրեա՞նք ընել ասիկա՝ այն ատեն ակնկալենք: Եթէ ոչ, իչուր չորհուրուինք, որպէսզի յետոյ շարաշար յուսախար չի մնանք:

ՇԱՀԱՊ

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՆ

(Յունվար 9/22)

Այսօր Ծննդեան տարեդարձն է Շէքսպիր

Սեւ, մռայլ, զահանգիչ, բայց եւ այնպէս, կարմիր ու բոցավառ յիշատակներու հսկայ բուրգ մըն է որ սրբազան հանդիսաւորութիւնով մը կը ցցուի, կը ծառանայ երեւա

կայսրութեան առջեւ... Դարերու երկարաշար կուռ շղթա- ներուն տակ, սոցէտ, գազանաբարոյ, անտաւորուած ու զգայազիրկ մարդակերներու ծանր լուծին ներքեւ թմրած՝ տքացող ու տառապող միջիօնաւոր զանգուածի մը զարթնումին յիշատակէ է որ կարթնցնէ Յունկարի 9/22ը:

Այդ կարմիր օրն էր որ ամբողջ հարիւր հազար ժողովուրդ, թափօր կազմած, պարզուկ քահանայի մը առաջնորդութեամբ, ուղղութեամբ գնացի. դաճակեցնելու պատար. Ո ճիւրի, Ապակեանութեան, Արիւնի ու թալանի կիսատուածներուն աղտոտ տաճար, հոնկէ հայցելու. ո՞վ դժբախտ ճակատագիր մարդկային, բարորութիւն, անգորբութիւն, ազատութիւն...

Ու անկուշտ վամպիրը, երկշոտ իր գազանութեան մէջ իսկ, չունեցաւ ուժ գիմարելու անզէն հօտի մը եւ անոնց ընդառաջ զրկեց իր տըլեղը ու սեւեռքի կամակատարները, անբան, անխօս, անկամ մեքենաները, մորթելու, ջախջախելու, քսնողելու եւ աւերելու, նոյն իրենց նախնիները, հայրերը, քոյրերն ու մայրերը: Ու քնութը, նակայքան, սուրն ու սուրինը ճօճեցին, շաշեցին, մինչեւ նէվայի սառնապատ ափերը դիակներու տաք-տաք արեան ջերմութիւնով հալեցան, մինչեւ դաճակեցին աղտոտ ու պիղծ փակարանը հարազատներու բուրբերով պատուարուեցաւ, մինչեւ վատագի ոճրագործներու գոյութիւնը ինկողներու արիւնով ապահովուեցաւ...

Արիւն, արիւն, արիւն ու դիակ ամենուրեք... Պարտուած էր դժբախտ հօտը... Ինկած էին հազարաւոր կանանց կեանքեր, զրկուած էին տասնեակ հազարաւոր քոյրեր ու մայրեր, արեան յորդ հոսանքին կերթալին միանալու արցունքի դետերը:

Ու խաչակիր գազանին արիւնոտ ու բոսորացած գէմքը փայլեցաւ պահ մը, վայրագ հրճուանքի վաղանցուկ շող մը լսկ. որ իր ապիկար փաստաբանութիւնով կուզէր հաւատալ իր բիրտ սոճի յաղթանակին. որ կը ընտար այդ անզէն զինակներու բուրգին վրայ բարձրացնել իր բոնակալութեան վերջին սխրանքին խորհրդանշանը: Այլ, զո՞ւր, զո՞ւր խաբկանք... Սեւիկորոյս ճիւղը չէր կըրնար երեւակայել թէ արեան ոտագած վայրերը նոր կիանքեր կը ծնին ու դիակներու շոր, կմախացած կոկորդները վրէժի շանթեր կարձակեն շորս կողմ:

Եւ հլու, հնազանդ, համբերատար, գլխահակ ոտս ամբոխը դարձաւ վրէժի ծարաւով խելայեղ բանակ մը, քանդող, տապալող, զիմացող, կասեղ... Ռուս ժողովրդի պատմութեան սեւ ու խեղճուկ էջերը տեսած էին արդեօք այսպիսի փառայեղ եւ դիւցազնական էջ մը: Մարդկային թատերաբեմի հանդիսատեսները ակահատես եղած էին արդեօք նման եղբարդիցազներգութեան մը ներկայացումին...

Սարուկ ազգերու ընդվզումի եւ յառաջխաղացման անիւները ունեցած էին երբէք այնպիսի հողմումներ՝ որպիսին ունեցաւ լայնատարած Ռուսաստանի տարաբախտ ժողովուրդի բնը...

Տարի մը միայն, եւ այսօր, երբ երկուսն Ռուսաստանը իր կարմիր

տարեկիցը կը բուրբէ, ի թօններու, սուրբերու եւ ծանծաղամիտ ապուշի մը պատկերին առջեւ խուճկ բուրբառող Ռուսաստանը չէ ան...

Հո՞ւր, բո՞ց, վրէժ... անձ թէ ինչ կը գրոայ իմա, անձ թէ ինչ յաջորդեցին արցունքին ու աղօթքին, հեղութեան եւ աղբստին...

Հեռաւոր Սիպերիայէն մինչեւ Պալմիրի ափերը, սառնապատ հիւսիսէն մինչեւ Սեւ ծովու մասյի եւ զերքեւերը հողիները փոթորկած եւ փրփրած են: Այլեւս ո՞չ նակայքա, ո՞չ քնութ, ո՞չ հրացան, ո՞չ սուրին եւ ո՞չ Տուճայի եւ սահմանադրութեան անպատկառ հեռաւորութիւնները կրնան վերջնականօրէն իջեցնել հեւացող ու կոհակեցող կուրծքերը, մինչեւ որ չը ծագի Մեծ Օրը: ու պայծառ արշալոյսը... յաղթութեան:

Ե՞րբ պիտի գայ այդ սենյալի օրը, — այսօրն չէ, ոչ ալ մօտ, բայց եւ այնպէս, պէ՛տք է եւ պիտի գայ...

Կրնայ Ռեթերսպուրկ ջախջախել ժամանակաւորապէս. կրնայ Մոսկվա գիւղերունը եւ անբուրբ տըլեղեր հանդիսակարգ մը գտնուի, կրնան հոս ուհոն ժայթքող հրարուխները անժամապէս մարիլ, խաբանիլ բունապետական սպանող ոյժերու բիրտ հարուածներուն տակ, սակայն, «ոյժը իրաւունք չէ» կրուէ մեծ իմաստասէրը բնութեան հետ ապրող մարդը. բնութեան սոյն անդառնալի օրէնքը անողոք է հաւասարապէս ամենուն ալ: Ոչ վրէժական աղուհսութիւններ եւ ոչ ալ Տուրնօվոյական գազանութիւններ կրնան առաջը անել հոսանքին:

Մ. Տոյակ

ՍԵՐՊ — ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՍՄՔՍՏԻՆ, ՀՍՄՍՁՍՏԻՆԻԹԻՆԸ

Օրուան ամենակարեւոր խնդիրը՝ Պալմիրեան թելակղզիին մէջ Սերպ-Պուլկարական մաքսային համաձայնութիւնն է:

Այն համաձայնութիւնը միայն վաճառականական չէ՝ քաղաքական տեսակետով ալ իր նշանակութիւնն ունի:

Այն օրը որ՝ այս մաքսային դաշնակալը պուլկարական երեսփոխանութեան ներկայացուցեցաւ հաստատուելու համար, մեծ աղմուկ հանեց Արեւմտեքի մէջ, Ամենէն շատ ազդեցեցաւ Աւստրո-Հունգարիան. նախ օրը օրին սգաբարբազիր մը ուղղեց սերպիական կառավարութեան եւ պահանջեց դաշնագրին բովանդակութեան հրատարակում իրաւոր կնքուելիք վաճառականական, դաշնագրութեան բանակցութիւնները ընդհատեց, ու զանոնք վերստին սկսելու համար պայման դրաւ Սերպ-Պուլկարական մաքսային դաշնագրութեան շնորհիւ Միւնխենի ատեն սպառնաց իր սահմանները սերպիական ապրանքներու համար գոցել ընդունելին:

Սերպիան՝ տնտեսապէս, գրեթէ ամբողջովին Աւստրո-Հունգարիայէն կախուած ունի, Սերպիական արտաձուլութիւնը, այս երկրին համար, եռապատիկ աւելի է անկէ ըրած ներածութեան:

Սերպիական անասուններու հրապարակը Աւստրո-Հունգարիան է. իսկ անասնաբուժութիւնը Սերպիոյ տնտեսութեան սիրտը:

Սերպ կառավարութիւնը ասի ի նկատի ունենալով՝ ուղեց ինչ ինչ զիջում ընել Աւստրիոյ, փոխելով Սերպ-Պուլկարական դաշնագրութեան այն կէտերը՝ որոնք գոհացում պիտի տային յիշեալ պետութեան, առանց սակայն, եղծանելու: Սերպ-Պուլկարական մաքսային դաշնագրութեան հիմնական սկզբունքը:

Այս պատասխանէն Աւստրիան գոհ չի մնաց, այլ պահանջեց անպայման վազ անցնել, ու այսպէս բոլորովին իր կամայականութեան ենթարկուել, ինչ որ անկախ թագաւորութեան մը արժանապատուութեան կը վնասէր:

Դանուբի ափունքի վրայ հիմայ կը պարզուի երբ տեսարան մը. քաղաքական կեանք մը երկու ճիւղ մէջ է, որ պիտի ունենայ ամենամեծ նշանակութիւնն ու պիտի ձգէ իր հետքը պատմութեան էջերուն մէջ:

Աւստրիան օգուտ քաղելով Սերպ-Պուլկարական մաքսային դաշնագրութեանէն. կը նետուի պալմիրեան թելակղզիին մէջ գտնուող իրեն ամենամօտիկ ու սկար թագաւորութեան վրայ, գայն անտեսապէս խելոցելու, ու այսպէս ոչնչացնելու համար պալմիրեան իշխանութեանց քաղաքականապէս աստիճական լուծելն ազատուելու ձգտուիները...

Սերպիան պիտի կրնայ տոկալ այս վաճառականական պատերազմին. շատ ալ հեշտ չէ այդ մասին բան մը ըսել: Հիմակու հիմայ կառավարութիւնը, քաղաքական կուսակցութիւնները անխտիր, վաճառականները, անսպասելի տոկունութիւն, աւելն եւ եռանդ յոյց կուտան սկսուած պատերազմը շարունակելու համար:

Աւստրիական կառավարութիւնը պաշտօնապէս ծանուցած է Սերպիոյ իր սահմաններուն փակուած վերաբերական ապրանքներու համար, ի պատասխանի աստրիական կառավարութեան այս որոշումին: Պէլկրատի մէջ վաճառականները անմիջական ժողով մը գումարած և որոշած են հեռագրով իրենց աստրիական հաստատութիւններու փոխանձած բոլոր յաւանարարութիւնները ոչնչացնել:

Սերպիան ալ կը պատրաստուի իր սահմանները Աւստրիական ապրանքներու առջեւ գոցել. նոյնը չի՞ պիտի անօրինէ արդեօք պուլկարական իշխանութիւնը:

Ե՞սա հաւանական է:

Արդէն Սօֆիայի վաճառականական սենեակը, տեղւոյն բոլոր երեսիլի վաճառականները ժողովի հրաւիրած է խորհրդածելու համար թէ՛ ինչպէս ցեղակից սերպ ազգին այս տնտեսական պատերազմին մէջ կրնան օգնել եւ ոյժ տալ. նոյնը ընել կը պատրաստուին եւ միւս քաղաքներու վաճառականական սենեակները: Նոյնը ըրին նաեւ վառնայի վաճառականները, ներկայ բացուած պատերազմին մէջ, Պուլկարիոյ շահերը կը պահանջեն, որ Սերպիոյ հետ ձեռք ձեռքի բռնած քայլ որովհետեւ երկու քիւնայ քաղաքականապէս թշնամին միեւնոյնն է: Ու այսպէս, երկու քը միասին ըլլալով կշիռ կուենենան վաճառականական աշխարհի առջեւ, իսկ աստրիական կառավարութեան վրայ՝ ազդեցութիւն:

Երկու դաշնակից կառավարութիւններու ներածութիւնը միասին առած, համեմատութեան գնելով արտաձուլութեան հետ, բաւական աչքի զարնող առաւելութիւն ունի իսկ եթէ ապագային Ռուսաստան ալ միանայ այն ժամանակ տնտեսապէս

բոլորովին ինքնիշխան՝ կրնան անշատ ու ազատ քաղաքականութիւն մը ստեղծել պալմիրեան թելակղզիին յատուկ, հիմը գնելով Պալմիրեան կառավարութիւններու դաշնակցութեան:

Աւստրիան մի միայն տնտեսական պայքար չէ օր կը մղէ, այլ կը վախնայ պալմիրեան փայր տէրութիւններու համախմբումէն. որոնք իրայտ հետ միանալով օր մը կը կազմեն պալմիրեան քաղաքական դաշնակցութիւն մը, ու ձեռք կար կտանելով անգր-ագրիական իտալական թագաւորութեան ի գլխու կը հանեն իր մինչեւ Սելանիք հասնելու համար փայլալայտ ճրագը:

Ապագային այս խրատելիայը, Աւստրիան մտատանջութեան կը մատնէ եւ նա ամէն ճիգ կը թափէ անոր ստեղծումը վիճեցնելու:

Հաւանականաբար, Աւստրիական գրգռումի հետեւանք թրքական կառավարութիւնը պուլկարական իշխանութեան շորս կէտերը քաղաքացած ծանուցագիր մը ուղղած է այսինքն:

1) Բ. Իուրը կը հարցնէ. ինչ կը նշանակէ մաքսային դաշնագրութեան հետեւեալ 171-րդ. յօդուածը.

«Երկուսն ալ զաշնագրութեան ընդ որմ ազդրելի է այն երկրներն որոնք համարուելու են կամ ապագային պիտի գտնուելու այս կամ այն դաշնագրով կառավարուելու մասին»:

Ու կուզէ հասկնալ ո՞րն է այն երկրները որ պուլկարական կառավարութիւնը կը կարծէ թէ՛ պիտի իյնայ դաշնագրութեան ինքնակալութեան մէջ:

2) Բ. Իուրը կը կարծէ թէ՛ Պուլկարիան Պէլկրիսի դաշնագրի համաձայն իրաւաստութիւն չունի այդպիսի գաշնագրութեան մը կնքել:

3) Նա մուլկար իշխանական կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ այն կէտին վրայ թէ՛ մաքսային դաշնագրութիւնը կրնայ թրքական շահերու վնասել, որովհետեւ պուլկարական իշխանութիւնը 1900 ի համաձայնութեան հիման վրայ պիտի կրնայ սկստական ապրանքները որպէս իրենը թուրքիան երմուծել:

4) Բ. Իուրը պուլկար իշխանական կառավարութիւնը կը հրաւիրէ նախարարական խորհրդի տուած որոշումին համաձայն, որ սուլթանական իրատեղ մը հաստատուած է, այդ դաշնագրութեանէն ետ կենալ(1):

— Առանց մեկնաբանութեան:— Պալմիրայի մեկտնով խմբագրուած այս թրքական ծանուցագրին պուլկար քաղաքական շրջանակներու մէջ բնաւ կարեւորութիւն չունի. տարբեր է ոչ ծիծաղելու համար:

ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԸ

ՎԵՐՁԻՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԻՄՆԵՐԻԾ

Երկուսից յուն. 10

Բզգաբնակութիւնը և ես շատ անգամ գիմուներ ենք արել գետերայ նահանգապետին և Փոխարքային, նկարագրելով բոլոր

դէպքերը և ուշադրութիւն հը-
րաւիրելով քաղաքի և ամբողջ
Ղարաբաղի ազգաբնակչութեան
չափազանց ծանր դրութեան
վրայ ։ Այս օրերս մինչև անգամ
ես դիմօցի ընդարձակ հեռագ-
րով թագաւոր կայսրին ։ Իշխա-
նութեան բոլոր կարգադրու-
թիւնները ուղղւած են ի նպաստ
թուրքերի ։ Զօրքի հրամանա-
տար Օզերովսկին, որին յանձ-
նարարւած է զօրքի և արտիլլե-
րիայի ուղեկցութեամբ պաշար
փոխադրել հայերի և թուրքերի
համար, դիմեց ինձ յունարի
Յին հեռագրով Աղղաւորից և խնդ-
րեց ինձ կարգադրելու, որ հա-
յերը վերադարձնեն Ասկերա-
նում կողոպտած թուրքական
տրանսպորտը, եւ պատասխանե-
ցի, որ վերջին շրջաւայր ըն-
թացքում թուրքերը շարունակ
կողոպտում են հայերի միլիոնա-
ւոր ապրանքը, որ արդարու-
թիւնը և անաշունութիւնը պա-
հանջում է, որ թուրքերն էլ վե-
րադարձնեն իրանց կողոպտածը
կամ նրա արժէքը ։ Օզերովսկին
զօրքի պաշտպանութեամբ անա-
գին քանակութեամբ պաշար քե-
րեց թուրքերի համար, մինչև
անգամ Շուշիքենդի հայերից
խլած տաւարը, իջեւանեց թուր-
քերի մասում, և չնայելով հայե-
րի հրաւերին շնորհ բերելու ա-
ռաջնորդարան բանակցութիւն-
ների համար, արհամարհանքով
մերժեց և վերադարձաւ Աղղամ

որպէսզի նորից փոխադրէ թուր-
քերի ապրանքը ։ Թուրքերը շա-
րունակ յարձակում են այն տե-
ղերի վրայ, ուր հայ բնակչու-
թիւնը սակաւաթիւ է ու չի կա-
րող նրանց դիմադրել ։
Աղմինիստրացիան այս տեսակ
դէպքերում հայերին օգնութիւն
չի ցոյց տալիս, իսկ երբ հայերը
յարձակուող թուրքերին դիմադ-
րում են ու հալածում, վերջին-
ներն դիմադրում են զինուոր-
ներն ու կողակները ։ Չնայած այս
ակներեւ անարդարութեանը,
աղմինիստրացիան այնուամենայ-
նիւ կրկին մեղադրում է հայե-
րին Ասկերանի դիքքերը բըռ-
նած են հայերի կողմից միակ
նպատակով, որ զինւած թուր-
քերը քաղաք չխուժեն, գիւղերը
չթալանեն, հայերը միայն այն
դերն են կատարում, որը պիտի
կատարէր զօրքը, պաշտպանելով
քաղաքը և գաւառը, սակայն
անզական վարչութիւնը աշխա-
տում է ցրել հայերին Ասկերա-
նանի դիրքերից, մինչդեռ ոչ ոք
չէ խանգարում հազարաւոր զին-
ւած թուրքերին հաւաքել Աղ-
ղամում ։ Հազիւ Օզերովսկին ան-
ցել էր Ասկերանից, մի քանի
հազար զինւած թուրքեր դիմե-
ցին նոյն կողմը փորձելով խու-
ժել քաղաքը, սակայն հայերը
նկատեցին նրանց, շտապեցին
գիրքերը բռնել և մի քանի ժամ
տնեղ կուլից յետոյ, հետ մղե-
ցին թուրքերին ։ Մի խօսքով

մեզ հալածում է անարդարու-
թիւնը ։ Քաղաքի և նահանգի
դրութիւնը սարսափելի է, ամեն
մի րոպէ սպասում ենք յարձակ-
ման ։
Ամբողջ քաղաքը մթութեան
մէջ է, նաւթը ծախում է ֆունտը
50 կոպեկով, իսկ այժմ նոյն իսկ
անկարելի է գտնել ։ Չաքարը ար-
ժէ 80 կոպ. ֆունտը, հաց չկայ,
և հացի փոխարէն կորեկ են
զործածում ։ Թուրքերը ստացան
մթերքներ մեծ քանակութեամբ
և ինչպէս երեւում է գեռ կը սուա-
նան. կրկին, հայերը այդ ողոր-
մութեան շարժանացան ։ սով է
ընկել ։ Ո՞վ կազատի քաղաքը, ա-
ղաչում ենք օգնութիւն հասցնել,
և օրքան կարելի է շուտափոյթ ։
Թեմակալ առաջնորդ
ՍՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

բեմին անվարժ երիտասարդներ էին ։
Սուսը սակայն խելացիութիւնն ու-
նեցած էր վառնայէն հրաւիրելու ։ Տի-
կին Պասուլաճեանը, որ իր փորձա-
նութեամբ անշուշտ կարեւոր բաժին
մը ունեցաւ խաղին յաջող անցնելուն
մէջ ։ Ներկայացումը այնքան մեծ տը
պաւորութիւն թողոց ներկաներուն
վրայ որ, շատեր իրենց արցունքը
չէին կրնար զսպել, պարզաւոր տը-
խուր տեսարաններուն առջեւ ։
Փափաքելի է որ Արարատս խում-
բը յաճախ տայ այս տեսակ կրթիչ ու
օգտաւէտ ներկայացումներ, որոնք
Շուսիայի ազգայնոց համար կման
չատ արդիւնաւոր ըլլալ ։
Թատերասեր

16 Յունվար
Շումա

Սուրինայէն նամակ մը եկած է
խմբագրութեանս՝ հնակարկատ
Դէորդ Արապաճեանի յանձնելու ։
Թող գայ ստանայ ։

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ,
ՉԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

— 0 —
ԸՆԴՀ. ԴԱՏԱՍԱԶԻՆ ՃՍՈՒՇ

(Ամանգումէի-էֆքեարէն քաղաւած)
Երբ Սիւլիո Րիչչիի՝ այսինքն վա-
հանի հետ ունեցած իր յարաբերու-
թեան աստիճանը հարցուեցաւ, նը-
շան պատասխանեց թէ, ասկէ ութ
ամիս առաջ երբ իրենց զործադրե-
լիք ոճիրին եղանակին ու ձեւին վը-

Օ Բ Թ Ա Վ Մ Ի Ր Պ Օ


Ա Պ Պ Է Ժ Ի Ի Լ
Բ. Մ Ա Ս
(Հատուածներ)

Սովորաբար, սոսազ գասս կը բաղ-
կանար պարտէզին մէջ պտոյտներէ,
զանազան մարգանքերէ, յաճախ
բուն ու անընդհատ ճարտար ան-
գամ մը, առ առաւելն, աքախայի
մը տակ, արբան, զանգակտնու յարդ-
գիւտակ մը գրած գլուխը և իր կա-
նանջ վերաբրիւնին մէջ փաթթուած՝
որ օգէն ու արեւէն սկսած էր զիզ-
նիլ, իր փիլիսոփայութեան գաղտ-
նիքներուն հազորդ կընէր ինձի, որ,
չիտակել, քիչ մը կը ստակացնէր զիս,
և որ բնաւ չէի նսակնարարդէն ։ Հա-
զիւ երբեմն կը անսնկի զինքը, ամ-
բողջ օրեր կանցնէին ու չէր երեւեր
արբան, իր մատենադարանին մէջ
կաշխատէր, կամ թէ խորհրդաւոր
սենեկին մէջ կը փակուէր սնտուկին
հետ ։ Մասին ու ես կը լսէինք զուր
սէն, երբ ոտքերը գետին կը զարնէր
ու կը պոսար, ու ազախիւր կը հա-
ռաջէր ։
— Խեղճ արբա, նորէն դեւերը ե-
կան... Ստոր վերջը գէշ պիտի ըլլայ ։
Արքային բացակայութեան միջո-
ցին, Մասին ինձի հորէն ջուր քայել,
կամ փայտերը շարել կուտար ։ Յետոյ
սկսաւ ստեպզին ստեպզ ու քիչ քիչ
սպասաւորի պտոյտն կատարել տալ ։
Տարի մը եղած էր արդէն որ կը

յաճախելի արքային ու Մասինին այս
այլադրակ զաստիճանութիւններուն ու
ամբողջապէս մոռցած էի սորված քիչ
մը լատիններէնս ։ Ուղղագրութիւն,
թուարանութիւն, ֆրանսական պատ-
մութիւն արդէն հինգած, ջնջուած
յիշատակներու վերածուած էին մըտ-
քիս համար ։ Ես կանէի ուժով ու
մկաններով ։
— Ինչպէ՞ս կըսեն լատիններէն կրա-
կին, կը հարցնէր հօրեղբայրս, երբ
տուն կը դառնայի, արիւն քրտինք
մտած, հեւալով, ամբողջովին խտտե-
րու թարմ հոտը բուրելով վրայէն ։
— Չեմ գիտեր, հօրեղբայր ։
— Շատ լաւ ։ Կը պատասխանէր
արբան, գոհունակութեամբ ձեռքերը
չփելով... Սքանչելի... իսկ ի՞նչպէս
կը գրուի դի պ ու ա ծ ։
— Թ... ի... պ... թիպ...
— Թ... թ... սքանչելի... Մասին,
Մասին Պ. Ալպերին կտոր մը կար
կանգակ տուր ։
Երբեմն պտոյտի կը տանէր զիս ։ Ա-
մենայնչին բանի մը առթիւ, ճամբուն
մէկ փոսէն բոյս մը տեսնելով, կամ
խնձորենիի մը տակ գիւղացիի մը
կանակը նշարելով, ոչխար մը, ամպ
մը, հովէն ձեւացած փոշիի՝ ոլորտ մը
աչքին հանդիպելով կը սկսէր ըն-
կերական կեանքի տեսութիւններ
պարզել, որոնք կընդմիջուէին սա
տեսակ բացազանջութիւններով ։
— Չեմ գիտեր թէ ինչու և այս բա-
ները քեզի կըսեմ... Գուցէ աւելի
լաւ էր որ ու է պաշտօնեայ մը ըլ-
լայիր ։
Վերջապէս, օր մը զիս իր մատե

նադարանը տարաւ ։ Այս կարեւոր
դէպքը տեղի ունեցաւ անձրեւոս օր
մը ։ Երբ այս պատկանելի արքային
ներս կը մտցնէր զիս, հօրեղբայրս
սա ճառը խօսեցաւ ինձի ։
— Կը տեսնե՞ս... Ասոնք ամբողջը
գիրքեր են... ու այս գիրքերը բո-
լոր մարդկային հանճարը կամփոփեն
իրենց մէջ... Փիլիսոփայութիւն, կը-
րօնք, գիտութիւն, արուեստ, բոլորն
ալ առնե՞ք մէջ են ։ Հիմա, տղաս, աս
բոլորն ալ խաբեքայութիւններ, ա-
պուշութիւններ կամ ոճիրներ են...
ու լաւ միտոյ պահէ արիւնք... պըզ-
տիկ ծաղկի մը ներշնչած միամիտ
յուզումը պարզունակ արտերու մէջ,
չատ աւելի թանկագին է, քան այն
թանձր գիտութիւնն ու օնմիտ
սնափառութիւնը զոր այս թունաւոր
աղբիւրներէն կը քաղենք ։ Ու գիտե՞ս
թէ ինչու... Որովհետեւ պարզ
սիրտը կը հստակնայ թէ ի՞նչ ըսել
կուզէ փոքրիկ ծաղիկը, իսկ բոլոր
գիտունները, բոլոր փիլիսոփաներն
ու բոլոր բանաստեղծները անոր մէկ
բառն իսկ չեն կրնար հասկնալ... Գի-
տուններ... փիլիսոփաներ... բա-
նաստեղծներ... պահ... Անոնք բո-
լորն ալ բնութիւնը կաղտոտեն իրենց
գիւտերով ու բառերով, ճիշտ ինչպէս
ղուն, եթէ աղտոտես շուշան մը
կամ վայրի վարդ մը քու քաջայովդ...
Կեցիք, կեցիք որ զղուեցնեմ զքեզ
ընթերցումէ ։ Երկար չի տեւէր այս
զործողութիւնը...
Մտտենադարանէն ։ պատահաբար
ձեռքին եկած առաջին գիրքը հանեց ։
— Եթ արոյա գիտութիւնը ։

Սրինօղաի առ, կարգաւ, նստէ փոք-
րիկ սեղանին առջեւ... ու կարգա-
բարձրձայն ուղած երեսդ ։
Հօրեղբայրս իր թիկնաթոռին
վրայ բռուեցաւ, երկար նիհար ու
սուր սրունքները մէկզմէկու վրայ
խաչածեց, և զլուխը ետեւ չըջած,
բազուկը յենարանին դրած՝ հրամա-
յեց ։
— Սկսէ՛ ։
Անհաստատ ձայնով սը, կակազե-
լով, սկսայ կարգալ, առանց բառ մը
հստակալու կարգացածէս, կը կակա-
զէի, ամէն սողին ստակալի սխալներ
կընէի ։ Հօրեղբայրս սկսաւ ծայրել,
բայց համբերութիւնը հատնելով՝
— Ուշադրութիւն ըրէ, աւանակ,
կարգալ բնա՞ւ չես գիտեր...
Ու մինչդեռ ես կը կարդայի, ան
կը յուզուէր, զիս կընդմիջէր յան-
կարծ խորհրդածութիւն մը ընելու
համար, բարկութեան ճիչ մը կար-
ձակէր ։ Մարմինը գէպի յառաջ, եր-
կու կուտիւրը թիկնաթոռին թեւե-
րուն կարկամած աչքերը վայրագօրէն
փայլեցնելով, կարծես կը սպառնար
զրքին, սեղանին ու ինձի ։ Ու վեր
կելլէր, ոտքերը գետին կը զարներ ու
կը պոսպար...
— Կարծես մէկ Աստուածը չէր բա-
ւեր կոր մեզի, աս ալ եկեր է ամէն
կողմ մէջմէկ Աստուած թխմելու...
Ապա... պուշը ։
(Շարունակելի)



րայ վահանի հետ կը խորհրդակցէին մտադրեցին Ղալաթիոյ թուռնէն ալ օդը հանել։ Ուստի այս անիծապարտ նպատակին գործադրութեանը համար վարձելու պատրուակով ձեռք անցուցին բանալին՝ թիւնէլի կից գտնուած խանութին, որ հիմա մոմ լաթի վաճառատուն է։ Վահանի ընկերակցութեամբ մտան այդ վաճառատունը, ուրկէ անոր տակի մեծ կակ նկուղը իջան։ Էոն ուշ-դիր կերպով գննեցին թէ, արդեօք կարելի էր ասկէ պեղումներ կատարել զէպի թիւնէլ։ Իրենց քննութենէն հասկցան որ թէեւ կարելի էր այն նկուղէն զէպի թիւնէլ պեղումներ կատարել, սակայն նկատելով որ Ղալաթիոյ այն փողոցը շատ բանուկ է եւ մանաւանդ իրենց անմիջական կերպով հոն կատարած պեղումներէն տեսնելով որ ժայտեր ու խոշոր քարեր կան նկուղին թիւնէլին կից պատին տակ։ Կրօնաբաններ իրենց առջի որոշումէն եւ բաւականացան նկուղին ալ կողմի անկիւնը՝ հողին տակ հինգ հատ պոմպալ թաղելով՝ զոր յաջողած էին իրենց հետ բերել վաճառատունը պտտելու եկած ատենին։

Նշանի այս յայտարարութեան վերայ՝ անմիջական ձեռնարկներ եղան առանց ժամանակ կորսնցնելու այդ քանդիչ նիւթերը իրենց տեղէն հանելու համար։ Նշանի առաջարկուեցաւ որ խուզարկութիւն կատարելու համար յիշեալ վաճառատան նկուղը զանոց պաշտօնեաներուն ընկերանայ, որպէսզի զիւրացնէ խուզարկութիւնները ու ցոյց տայ պոմպաներուն թաղուած տեղը։

Հարցաքննութիւնը ժամերէ ի վեր կը շարունակուէր։ Նշան խնդրեց որ բնական պէտք մը գոհացնելու համար արուի իրեն, ինչ որ բնականաբար չը զլացուեցաւ ու իրեն վրայ հսկելու պաշտօն ունեցող երկու ոստիկանական յօմիտներու հսկողութեամբ ճեմիչ գնաց, ձեմիչին պատուհանը մարդու հասակէն վեր ըլլալով անկարելի էր անկէց փախչիլ։ Եւ իրեն ընկերացող երկու քօմիտներուն ճեմիչին զբան առջեւ կանգնելն ալ բաւական նկատուած էր յիշեալին վրայի հսկողութիւնը ապահովելու համար։ Եւ Սակայն յիշեալ նշան ճեմիչին մէջ մնացած կարճ ժամանակամիջոցին, հոն գտնուած թիւթեղէ չուրի ըպրըզը աննկողով՝ արտակարգ հպակեպով եւ առանց աղմուկ հանելու՝ անոր ծայրն ու կողմերը սրցուցած ու հատու գործիքի վերածելով անով իր փորը ճեղքած եւ կոկորդին մէկ քանի մասերը զիրաւորած ու թեւին կարմիր արիւն պարունակող մեծ բազկերակը մահացու կերպով պատտած է սղոցելու պէս։ Դուրսէն յղացուած կասկածի մը վրայ անմիջապէս բացուած է դուռը ճեմիչին, ուր ի յայտ եկած են այս ամէնքը։ Իսկոյն բազմաթիւ կարող բժիշկներ հրաւիրուած են յիշեալը՝ զարմանելու համար սակայն իր իսկ ձեռքով բացած վերքերուն հետեւանքովը մեռած է։

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
Թ Ո Ւ Ր Ք Ի Ս
ԵՏՄԵՆԷՆ հասած լուրերուն համաձայն, Ոսնայի մօտերը,

մէջը փաշան փառաւորացէս յաղթուած է։ Մանրամասնութիւններ կը պակսին։ Այս Բ. Գրան մէջ մեծ յուզում կը պատճառէ։

— Պօլսէն կիմացնեն թէ՛ Բ. Գրանը, բոլոր պետութիւններուն ծանուցագիր մը պիտի ներկայացնէ. որով պիտի պահանջէ Սուլթանի դէմ եղած մահափորձի հեղինակներուն յանձնումը որոնք ապատեանած են Զուրիցերիւն ու Երիզ Երկիրները։

— Լուր կը շրջի թէ՛ Գերմանացի դրամատէրերու խմբակ մը, Ասիական ծածկատանի հանքերու շահագործումի առանձնաշնորհումը ուղարկէ՝ տուճկական կառավարութեան ըլլալը 60 միլիոն ֆրանքի փոխառութեան հանդէպ։

— Ժուրիսի դատավարութեան վերաքննիչ ատենի կողմանէ հաստատուելուն դէմ, Պէլճիքայի սուած բողոքագրին, շատ մը դիմագրութիւններ ինչպէս նաև ֆրանսականը ոյժ կուտան։

— Տուճկական կառավարութիւնը բանակցութիւններ կ'ընէ, գեա 100 հատ արագահարուածն թնդանթիւններու գնման համար։

Նաեւ 3000 հունգարական և Զուրիցերական ձի պիտի գնէ, 2րդ, զօրքանակի ձիաորներու և թնդանթիւններու համար։

Ռ Ո Ւ Ս Ի Ա

«Նշան՝ Գոմբանի» կիմանայ թէ՛ Յարսթէ սէլօի մէջ անթիւ ձերբակալութիւններ տեղի ունենան. Ցարի կեանքի դէմ նիւթուած գաւազարութեան երեւան գալէն իվեր, ու շատցուցած են նաև պահակազօրքերու թիւը։

Հրէաներու դրամութեան հիմնական բարեփոխման մասին, 17 ձայնի դէմ 46 ձայնով, կառավարական խորհուրդը հակառակած է։

— Յետագիծական պատերազմութիւն մը ներկայացած է ցարին. խնդրած է թէ՛ հրէաներուն համահասարակ իրաւունք շտրուի, իսկ Յարը պատասխանեց իրենց՝ կը տեսնենք։

— Հոնէլի մէջ ապստամբութիւնը սարսափելի է։ Փողոցներու մէջ անհատնում սպանութիւններ կ'ըլլան։ Քստմեծ ցոյցիչ կոտորածէ մը ետքը, զինուորականութիւնը յաջողած է ապստամբները ցրուել Մեռածներու և վիրաւորեալներու թիւը չափէն աւելի է։

— «Նովոէ Վրէժիան» կը յայտարարէ թէ՛ «կայսերական օրէնսագրիտութեան հիմնական նախագիծը» կազմող կառավարական օրէնքը արդէն տպագրուած է։ Այս օրինագիծը քիչ օրէն պիտի հրատարակուի կայսերական մանիֆէստով մը։

Կան մանիֆէստով մը։ Ներկայ օրէնքին առաջին յօդուածը կը կազմէ նաև հետեւեալը. «Ռուսական կայսրութիւնը անսահման միապետական է»։

«Նսահման» բառը պէտք էր շնչուած ըլլար։ Այսու նախագիծը Ցարին յանուն սահմանադրութեան երգուիլը չը նախատեսէր։ Սակայն հիմնական օրինագիծին հետ հրատարակուող մանիֆէստին մէջ պիտի յիշուէր թէ՛ կայսրը կապահովէ այս օրէնքին պահպանումը գահաժառանգի և կայսերական ընտանիքի սերունդին կողմանէ։ Դիպլոմատիկ պաշտօնէութիւնը հետեւեալ կերպով կը սահմանուի. կայսրը՝ կատարարական խորհուրդին հետ միասին կը գործադրէ իր օրէնսդատական իշխանութիւնը։

Ու է առաջարկուած օրէնք Յուժէն և կատարարական խորհուրդէն եթէ միլիոնի միլիոն ժողովանիստի տեւոյութեան ժամանակամիջոցին երկրորդ անգամ ներկայացուիլ։

Մատակարարական հրամանատուութիւնները կայսերական առանձնաշնորհումները են, սակայն ձերբակոյտը իրաւասութիւն ունի հիմնական և միւս օրէնքներու հակառակ եղող հրամանագիրները ոչնչացնել։

Եթէ Տուման ցրուել հարկ ըլլայ, այդ մասին ելած հրամանագրին մէջ պէտք է յիշատակել և որոշել ընտրութիւններու և նոր երեսփոխանութեան գումարումի թուականը։

Ընտրութիւնները պէտք է որ ցրուելէն առ առաւել վեց ոմիս վերջը ըլլան։

Քաղաքացիներու իրաւունքները, արեւմտեքի սահմանադրութեանց մէջ եղածին պէս նախատեսուած է։ Օրէնքի առջև մէն մի քաղաքացի հաւասար իրաւունքներ ունի որոնց անձեռնմխելութիւնը և անձեռնկանութիւնը երաշխաւորուած է։

— Կառավարութիւնը որոշեց 480 միլիոն ռուպլիի չափ տուրք մը բարձրել։ Այս գումարը 1906 թ մէջ եղած բացը գոցելու պիտի ծառայէ։

— Բիկաէն կիմացնեն թէ՛ ամբար մէկ քանի պահակներ սպաննելէն ետքը, տիրապետած է բանտին, ուր բանտարկուած էին քաղաքական յանցաւորները, որոնք ալ զգաւտ արձակուեցան։

— «Բիկալիչէր Երէսու» կիմանայ թէ՛ Գերմանացի ելեմտագետ Մէնտէլսոնը, յեղափոխականներու կողմանէ մահուան դատապարտուած է, իսկ ասոր պատճառը այն է թէ՛ նա կապակցի եղեր արտասահմանի մէջ ռուսական փոխառութիւններու կնքումին։

— «Ռուսգետ Վէտսոնոգի» կը յայտարարէ թէ՛ Յարսթէ Սէլօի հիւանդանոցէն շատ մը առարկաներ և 83156 ռուպլի գողցուած է։ Գողերը անյայտ են։

— Ամսոյս 13ին, Խանապոյի և Գրիչպոսի հայկական գիւղերու վրայ՝ զօրավար կողջանովր թընդանթիւնով յարձակած է, այս գիւղերու բնակիչները 15 օրեր առաջ, Կուչի սոված միւսիւմաններուն յատկացեալ, միմեռատար սայլերու վրայ յարձակելով աւարած էին։

Հայերը թողնով իրենց պաշարուած գիւղերը՝ Խաճարի միւսիւման գիւղին մէջ ապստանած են, ուր կռիւը շարունակուած է։

— Վլադիվոստոկէն կիմացնեն թէ՛ հրացանաձիգերու 10րդ զօրքանակի հրամանատար, զօրավար Սէլիվանովը, սպա մը զինուորներէն ծանրապէս վիրաւորուած է։

— Կառավարական իշխանութիւնը Խարապանովս գիւղին, Մէրցքի անուն բորք բանտը նետել առում ըլլալով, 2000 դիւղացիներ, Վորոնէժի մոտ Վալաուժի բանտը գրծած են, ուր բանտարկուած էր վերոյիշեալ քահանան. ամբար յարձակելով բանտին վրայ, քահանան և միւս բանտարկեալները ազատած է։

— Բեթերսպուրկէն կիմացնեն հետեւեալը. Բանտարկեալները կը պահանջեն իրենց գատուիլը հակառակ պարագային որոշած են արատովոր գործադու մը ընել այսինքն անթիւնութեան մեռնիլ բողոքի այս նորաձեւը Պոլսու պետարքերին մէջ բողոքովին ծաւալած է, բանտարկեալները յայտարարած են իրենց պահապաններուն՝ եթէ շարունակեն մերժել իրենց ընթերցանութեան գիրքեր տալը, այն ատեն պիտի բողոքեն իրենց տրուած կերակուրները մերժելով։

ՏՄԻՒՄԱՐԻՒՄ

Ամսոյս 16ին, կէսօրէն վերջ ժամը 3ը 40 անցած, 88 տարեկան հասակի մէջ, Տանիմարքայի Քրիստիան թագաւորը մեռաւ։ Նա առաւուն սովորական ունկնդրութիւններէ ըրած ատեն յանկարծ ինքզինքը գէշ կըզգայ ու կը պռակի և քիչ յետոյ առանց տանջանքի, շրջապատուած իր ընտանիքէն կը մեռնի։

Սիւքսանտրա թագուհին, նորվեկիոյ, Յունաց և Շվեդիոյ թագաւորները ալ մեծ իշխան Միխայիլը նոյն իսկ Գերմանիոյ կայսրը Վիլհելմ ներկայ պիտի ըլլայ թաղման հանդէսին։